ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2002. Т. LV, №2.

ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

80-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյանը ծնվել է 1922թ. մարտի 17-ին, Ալեքսանդրապոլում (Գյումրի), մտավորականի՝ Շվեյցարիայի Լոզանի համալսարանն ավարտած իրավաբան Ալեքսանդր Գևորգի Համբարձումյանի ընտանիքում:

1942թ. նա փայլուն գնահատականներով ավարտում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը, որտեղ էլ սկսում է իր գիտական գործունեությունը: 1946թ. նա հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական, իսկ 1952թ.՝ դոկտորական թեզ՝ տեխնիկական գիտությունների գծով: 1953թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1956թ. (34 տարեկան հասակում) ընտրվում է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից - անդամ, իսկ 1964-ին՝ ակադեմիկոս:

Մոսկվայում հրատարակված («Գիտություն» հրատարակչություն) «Անիզոտրոպ թաղանթների տեսություն» (1961թ.) և «Անիզոտրոպ սալերի տեսություն» (1967թ. և 1988թ.) մենագրությունները լայն ճանաչում ստացան և սեղանի գիրք դարձան նախագծային և կոնստրուկտորական կազմակերպություններում: Ս. Համբարձումյանի տեսությունը հնարավորություն տվեց կատարելու ժամանակակից կոմպոզիցիոն նյութերից բարակապատ կոնստրուկցիաների ճշգրիտ հաշվարկներ և Էական դեր խաղաց ժամանակակից ավիա- և հրթիռաշինարարության մեջ:

Գիտնականի բազմաթիվ մենագրությունները և գիտական հոդվածները հրատարակվել են ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Չինաստանում և այլ երկրներում:

Ս. Համբարձումյանը ոչ միայն փայլուն գիտնական է, այլև գիտության և կրթության խոշոր կազմակերպիչ, հասարակական գործիչ. նրա ակտիվ մասնակցությամբ հիմնադրվեց ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը, որի տնօրենն էր 12 տարի շարունակ:

Ս. Համբարձումյանը մեծ հեղինակություն է վայելում Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայում, ընտրվել է բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և փոխպրեզիդենտ:

Ականառու գիտնականի գիտական և գիտամանկավարժական գործունեությունը սերտորեն կապված էր ճարտարագիտական կադրերի մի շարք սերունդների ուսուցման հետ. 1943-46թթ. նա դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ 1948-ից՝ Երևանի պետական համալսարանում: Նրա գիտական ղեկավարությամբ ավելի քան 50 երիտասարդ գիտնականներ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական թեզեր:

1977թ. ակադեմիկոս Ս. Համբարձումյանը նշանակվում է Երևանի պետական համալսարանի ռեկտոր և ղեկավարում այն 14 տարի շարունակ: Իր գիտելիքները, ուժն ու եռանդը ներդնելով երիտասարդ սերնդի ուսուցման կազմակերպման գործում՝ նա ոչ միայն

իր ուշադրության կենտրոնում էր պահում բնական գիտությունները, այլև նպաստում էր Հայաստանի պատմության, հայոց լեզվի, գրականության և հայագիտության զարգացմանը:

Հսկայական է ակադեմիկոս Ս.Ա. Համբարձումյանի դերը մեր հանրապետության հասարակական կյանքում. Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր և նախագահ (1975-1980), ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, (1979-1999), ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անդամ (1989-ից)՝ նա միշտ եղել է Հայաստանի շահերի ջերմ պաշտպանը: Դա հատկապես ցայտուն դրսևորվեց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի քննարկումների ընթացքում, երբ Ս. Համբարձումյանը Գերագույն խորհրդի՝ իր մի խումբ գործընկերների հետ վճռականորեն պաշտպանում էր Հայաստանի արդարացի պահանջները:

Ակադեմիկոս Ս.Ա. Համբարձումյանը ընտրվել է մեխանիկայի և մեքենաշինության ճարտարագետների միջազգային ընկերության անդամ, օդագնացության միջազգային ակադեմիկոս, ճարտարագետ-մեխանիկների ամերիկյան ընկերության անդամ, մի շարք երկրների համալսարանների պատվավոր դոկտոր, հայկական փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս, Սլովակիայի ճարտարագետ-մեխանիկների ընկերության պատվավոր անդամ և այլն:

Ավելի քան 20 տարի նա եղել է Հայաստանի՝ Պետական մրցանակներ շնորհող կոմիտեի նախագահի տեղակալ և շուրջ 12 տարի՝ ԽՍՀՄ Լենինյան և Պետական մրցանակներ շնորհող կոմիտեի անդամ:

Ս. Համբարձումյանը պարգևատրվել է Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային Կարմիր դրոշի, Պատվո նշան շքանշաններով, ԽՍՀՄ և Հայաստանի բազմաթիվ մեդալներով և պատվոգրերով: Վերջերս նա արժանացավ Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի մրցանակի՝ Մեծ արծաթե մեդալի:

Ս.Ա. Համբարձումյանը այսօր էլ շարունակում է իր եռանդուն գիտական և հասարակական գործունեությունը. 1992թ-ից նա Մեխանիկայի ինստիտուտի պատվավոր տնօրենն է, 1993-ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդատու և անդամ: Ինչպես միշտ, զբաղվում է գիտական աշխատանքով՝ հրատարակելով գիտական հոդվածներ և մենագրություններ: Զբաղվում է նաև հասարակական գործունեությամբ, Հայ առաքելական եկեղեցու Հոգաբարձուների խորհրդի անդամ է: Գրում է հիշողություններ:

Մշտապես վայելչակազմ ու ձգված՝ նա օրինակ է երիտասարդների համար:

Տեղեկագրի խմբագրական կոլեգիան և բազմաթիվ գործընկերները, շնորհավորելով ականավոր գիտնականին ծննդյան 80-ամյակի առթիվ, մաղթում են նրան քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր ու հայրենանվեր գործունեություն: